ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 46/36 «16» 03 2021 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԿԳՄՍ նախարարի 01/11.2/4635 գրությունը և Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ

1. 2021 թ. մարտի 17-ից ԵՊՀ բոլոր կրթական ծրագրերով ուսումնական գործընթացն իրականացնել առկա և հեռավար ձևերի համադրությամբ (դասախոսությունները անցկացնել հեռավար եղանակով, գործնական պարապմունքներն անցկացնել հեռավար կամ առկա եղանակով):
2. Առկա և հեռավար դասընթացները կազմակերպել համաձայն դասացուցակի: Դասերի սկիզբը սահմանել 9.30-ին: Դասերի տևողությունը սահմանել 80 րոպե՝ 5 րոպե դասամիջոցով:
3. Սահմանել, որ.

3.1. առկա և հեռավար դասընթացների ուսումնական նյութերը պետք է հասանելի լինեն https://e-learning.ysu.am/ հարթակում, որտեղ դասավանդող դասախոսը պարտավոր է տեղադրել դասընթացի պլանը և հեռավար դասընթացի դեպքում՝ համապատասխան հղումները,

3.2. հեռավար դասընթացներն ու քննություններն (ստուգարքները) պետք է անցկացվեն բացառապես https://e-learning.ysu.am/ հարթակում:

3.3. Առկա և հեռավար ձևերով դասերի անցկացման օրերը չպետք է համընկնեն:

4. Կորոնավիրուսային հիվանդության (Covid-19) տարածման կանխարգելման նպատակով կառուցվածքային ստորաբաժանումներում հակահամաճարակային կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունը վերապահել համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին:
5. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ռեկտորի ժ/պ.-ի 25.02.2021 թ. թիվ 34/80 հրամանը:
6. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին և սովորողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ Ռ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ